

ԾՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐ

Ծընունդի գիշեր, հոգեգմայլ գիշեր,
Հովիւներ արթուն եւ հըրեշտակներ,
Ուրախ երգերու հնչիւններով վառ,
Կու տան աւետիս համայն մարդկութեան.
Ծընած էր սիրոյ Արքան օրհնարան,
Մեղեքը մարդոց փաւելու համար:

Ծընած էր Արքան՝ Աստուծոյ Որդին,
Լուսաւորելու սրտերը մթին,
Մարդկային ազնիւ ըզգացումներով
եւ աստուածահաճոյ ապրելակերպով
Օժտելու համար անխիղճ եւ անգութ
Կեանք վարող մարդոց կենցաղը անփոյթ:

Բեթղեհէմ փաղափ մտորըն անշուք,
Լոյսով օծուեցաւ Աստուծոյ կամփով,
Աստղ մը լուսաւոր առաջնորդ դարձաւ
երեւ մոգերուն, որոնք հաւատփով,
երկիւղածութեամբ ու նուէրներով,
երկրպագեցին ծնած Արքային:

Յիսուս Մանուկի ծնունդը խոնարհ,
Աւետիս տալով մենք կը տօնենք յար,
Որպէս մարդացեալ Աստուած կենարար,
Որ Աստուածային սիրոյ խորհրդով,
եւ սուրբ Մարիամի մայրական ուխտով,
Դարձաւ մարդկութեան խիղճը իր կեանքով:

Այս գիշեր տօն է՝ Սիրոյ Բուրաստան:
Կը տօնենք հպարտ, սիրով դիւքական,
Մեր սուրբ հայրերու շարականներով
եւ հայրենաւանդ խոր աղօթքներով,
Տալով աւետիս ամբողջ հայութեան,
Որ ծնաւ Արքան՝ Փրկիչ մարդկութեան:

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ